Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

12004

845-ԱՀ 4534

28
Հ-21

# ՀԱՄԱՌՕՏ

## Հրահանգ Քրիստոնէական

# ՀԱՒԱՏՈՑ

Հրամանաւ Հոգևոր Իշխանութեան։

Տիպ երկրորդ.



280
358-ՀԱ

Ի ՏՓԽԻՍ։
[illegible]պարանի Տեառն Գաբրիէլի
Պատկանեան։
1850.

280
858-2Ա
28
Հ-21

# ՀԱՄԱՌՕՏ

## Հարցմունք Քրիստոնէական Հաւատոյ։

Հ. Քո կրօնն ո՞րն է։
Պ. Քրիստոնէութիւն։
Հ. Որով եղեր քրիստոնեայ։
Պ. Մկրտութեամբ։
Հ. Զի՞նչ նշանակէ անունդ քրիստոնեայ։
Պ. Հաւատացեալ յանուն Քրիստոսի։
Հ. Զի՞նչ է նշան քրիստոնէութեան։
Պ. Խաչն Քրիստոսի։
Հ. Քրիստոնեայք ՚ի կնքելն նշանաւ խաչին զերեսս յանուն որոյ ակնարկանեն։
Պ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։
Հ. Զի՞նչ է Հայր և Որդին և սուրբ Հոգին։
Պ. Մի Աստուած, որ և յոչնչէ արար զմարդ և զամենայն արարածս, և միշտ խնամէ զամենեսեան։
Հ. Վասն էր ստեղծ Աստուած զմարդիկ։
Պ. Վասն այն՝ զի ճանաչեսցեն զնա, զկամս նորա կատարեսցեն, և զի ՚ի վախճանի արքայութեան նորա արժանի եղիցին։

1005
2014

## Բ. Միութիւն Աստուծոյ 'ի սուրբ Երրորդութ-
## եան:

Հ. Զի՞նչ է Աստուած:
Պ. Հոգի ամենակալ, ստեղծող երկնի և երկրի, երևելեաց և աներևութից:
Հ. Քանի՞ է Աստուած:
Պ. Մի է:
Հ. 'Ի քանի՞ անձինս է ճանաչեալ Աստուած:
Պ. Յերիս անձինս:
Հ. Զի՞նչ է անուն երեքանձնեան անձին:
Պ. Անուն միոյն է Հայր, անուն երկրորդին՝ է Որդի, և անուն երրորդին՝ է Հոգի սուրբ:
Հ. Աստուած է Հայրն:
Պ. Այո՛ Աստուած է:
Հ. Աստուած է Որդին:
Պ. Այո՛ Աստուած է:
Հ. Աստուած է և Հոգին սուրբ:
Պ. Այո՛ Աստուած է:
Հ. Արդեօք երեք են Աստուածք:
Պ. Ո՛չ են երեք Աստուածք, այլ մի է Աստուած, և երեք անձինք:

## Բ. Մարդեղութիւն Քրիստոսի:

Հ. Յերից Երրորդութեան անձանց՝ որ անձն մարմնացաւ:
Պ. Անձն որդւոյն, որ է Քրիստոս:
Հ. Զի՞նչ նշանակէ մարմնանալն:
Պ. Լինել նման մեզ կատարեալ մարդ:
Հ. Յորում աւուր մարմնացաւ Քրիստոս:
Պ. Յաւուր աւետեաց, յորում Որդին Աստուծոյ՝ Հոգւով սրբով յղացաւ յարգանդի կուսին Մարիամու:
Հ. Յորում աւուր ծնաւ Քրիստոս:
Պ. ՚Ի վեց Յունուար ամսոյ:
Հ. Ո՞ւր ծնաւ Որդին Աստուծոյ:
Պ. ՚Ի Բեթղեհէմ քաղաքին:
Հ. Զի՞նչ կոչեցաւ անուն Որդւոյն Աստուծոյ:
Պ. Յիսուս:
Հ. Զի՞նչ այլ եւս կոչեցաւ կամ կոչէր Յիսուս:
Պ. Քրիստոս:
Հ. Ե՞րբ յայտնեցաւ աշխարհի Յիսուս Քրիստոս:
Պ. ՚Ի Մկրտութեանն:
Հ. Քանի՛ ամաց էր Քրիստոս յորժամ եկն ՚ի մկրտութիւն:
Պ. Երեսնամեայ:
Հ. Յորում աւուր մեռաւ Քրիստոս:
Պ. ՚Ի վեց Յունուարի ամսոյն, յորում աւուր՝ երեսուն ամօք յառաջ՝ ծնեալ էր ՚ի կուսէն:

Հ. Յորմէ՛ մկրտեցաւ Քրիստոս։
Պ. ՚Ի Յովհաննէ։
Հ. Ո՛րպէս կոչեցաւ Յովհաննէս։
Պ. Մկրտիչ, Կարապետ։
Հ. Ո՛ւր մկրտեցաւ Քրիստոս։
Պ. ՚Ի գետն Յորդանան։
Հ. Ո՛րպէս կոչի օրն ծննդեան եւ մկրտութեան։
Պ. Աստուածայայտնութիւն։
Հ. Քրիստոս յետ մկրտութեան ՚ի քանի՛ ժամանակս շրջեցաւ յերկրի։
Պ. Յամս երիս եւ ամիսս չորս։
Հ. Յետ կատարման երեքամեայ եւ չորամսեայ ժամանակին զի՛նչ արար։
Պ. Ինքն Երուսաղէմ մտանէր ՚ի կամաւոր չարչարանս։
Հ. Ո՛վ մատնեաց զնա։
Պ. Յուդայ Իսկարիովտացի։
Հ. Ո՛րպէս եղեւ զկնի մատնութեանն։
Պ. Քահանայապետք դատեցին զնա եւ դատա-պարտեցին, եւ չարախօսեցին զնմանէ առ Պիղատոս դատաւորին Հրէաստանի։
Հ. Ո՛րպէս արար Պիղատոս։
Պ. Դատապարտեաց եւ ՚ի ձեռս նոցա, զի խաչեսցի։
Հ. Ո՛ւր խաչեցաւ։
Պ. ՚Ի լերինն Գողգոթայ։

Հ. Ե՞րբ խաչեցաւ:
Պ. Յառաւօտու ուրբաթու։
Հ. Ե՞րբ մեռաւ:
Պ. 'Ի նմին աւուր ուրբաթու յետ ճաշու:
Հ. Ընդ երկա՞ր ժամ մարմինն Քրիստոսի յետ մեռանելոյն 'ի խաչափայտին:
Պ. Մինչեւ ցերեկոյ նոյն ուրբաթ աւուր:
Հ. Եւ ապա զի՞նչ:
Պ. Իջուցեալ 'ի խաչէն՝ եւ պատեալ կտաւ օծեալ 'ի նորափոր գերեզմանի՝ որ 'ի վիմի:
Հ. Ցո՞րչափ ժամանակս եկաց 'ի գերեզմանի Յ֊ Ք֊:
Պ. Մինչեւ ցերեկոյ շաբաթ աւուրն:
Հ. Զի՞նչ արար Քրիստոս 'ի մեռանելն իւր:
Պ. Բանականն հոգին Քրիստոսի էջ 'ի դժոխս, եւ ազատեաց զհոգիս սրբոց նախահարց:
Հ. Զկնի այնորիկ զի՞նչ արար:
Պ. Յարեաւ 'ի մեռելոց:
Հ. Ընդ երկա՞ր ժամ Քրիստոս բնակեաց յետ յառնելոյն 'ի մեռելոց:
Պ. Աւուրս քառասուն:
Հ. Եւ զկնի քառասնից աւուրց՝ զի՞նչ արար Քրիստոս:
Պ. Համբարձաւ յերկինս, եւ նստաւ ընդ աջմէ Հօր, խոստացեալ յայտնիլ դարձեալ գալ 'ի կատարածի աշխարհին փառօք գալ 'ի դատել կենդանեաց:

Հ. Զխոստումն իւր որպէ՞ս կատարեաց Յս՟ Քս՟։
Պ. Յետ տասն աւուրց զկնի համբարձմանն Քրիստոսի՝ Հոգին սուրբ էջ ՚ի վերնատունն, և հրեղէն լեզուօք ելից զաշակերտսն, որք հիմն եղեն նորոյս սուրբ եկեղեցւոյ։

## Գ. Եկեղեցւոյ և խորհրդոց նորա։

Հ. Զի՞նչ է սուրբ Եկեղեցին։
Պ. Եկեղեցին է ժողով հաւատացելոց և միացեալ ճշմարիտ քրիստոնէից։
Հ. Զի՞նչ է խորհուրդ Եկեղեցւոյ։
Պ. Արտաքին արարողութիւն, յորում զգալի օրինակաւ ներգործէ փրկական շնորհք կամ աստուածային զօրութիւն։
Հ. Քանի՞ են խորհուրդք Եկեղեցւոյ և զի՞նչ։
Պ. Եօթն. Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Պսակ, Ձեռնադրութիւն և Վերջին Օծումն.
Հ. Զի՞նչ է Մկրտութիւնն։
Պ. Լուացումն մարմնոյ ջրով, որով հոգին մաքրի անմեղութեամբ և ազատի ՚ի սկզբնական մեղաց։
Հ. Զի՞նչ է Դրոշմն։
Պ. Կնիք՝ որ դնի ՚ի ճակատ մարդոյ, և նովաւ

շնորհեն նմա պարգեւք սուրբ Հոգւոյն։

Հ. Զի՞նչ է Հաղորդութիւնն։

Պ. Ճաշակել զսրբագործեալ հացն եւ զգինին, ընդ տեսակօք որոց ուտեմք ճշմարտապէս զմարմին Քի՟ եւ ըմպեմք ճշմարտապէս զարիւն Քի՟։

Հ. Զի՞նչ է Ապաշխարութիւնն։

Պ. Դարձումն ՚ի մեղաց։

Հ. Զի՞նչ է Պսակն։

Պ. Կապ ՚ի մէջ առն եւ կնոջ։

Հ. Զի՞նչ է Ձեռնադրութիւնն։

Պ. Իշխանութիւն, որ ձեռն դնելով ՚ի վերայ նուիրելոյ՝ շնորհէ նոցա իրաւունս կարգի։

Հ. Զի՞նչ է Վերջին Օծումն։

Պ. Օծումն հիւանդին իւղով, որով սրբին նե-րելի մեղք հիւանդին։

Հ. Եկեղեցին մեր ունի՞ խորհուրդս այս։

Պ. Այո՛ ունի, բայց ՚ի մկրտութեան ընդ դը-րոշմին տայ ամենայն մկրտելոյ։

Հ. Ապա խորհրդոյ Վերջին Օծման ո՞ւմ է։

Պ. Պատիւ է քահանայական կարգին։

## Դ. Փրկութեան մեր ՚ի ձեռն Բարի Գործոց։

Հ. Արդեօք բաւական են հաւատք եւ խորհուրդք եկեղեցւոյ՝ ՚ի փրկութիւն մեր։

Պ. Հարկաւոր են առ այն և գործք բարիք։

Հրց. Զի՞նչ են բարեգործութիւնքն։

Պ. Բարեգործութիւնք են Աստուածահաճոյ առաքինութիւնք։

Հրց. Ո՞ք են բարեգործութիւնքն։

Պ. Եօթն առաքինութիւնք հոգևորք, եօթն առաքինութիւնք մարմնաւորք, եօթն պարգևք Հոգւոյն սրբոյ, եօթն ողորմութիւնք հոգե-ւորք, և եօթն ողորմութիւնք մարմնաւորք. աղօթք, պահք, գործք ինն երանութեան, և պահպանութիւնք տասն պատուիրանաց։

Հրց. Ո՞ք են առաքինութիւնքն հոգևորք։

Պ. Հաւատ, յոյս, սէր, (որք ասին առաքի-նութիւնք Աստուածաբանականք.) արիու-թիւն, արդարութիւն, խոհեմութիւն և ող-ջախոհութիւն, (որք ասին առաքինութիւնք բարոյականք։)

Հրց. Զի՞նչ են առաքինութիւնքն մարմնաւորքն։

Պ. Խոնարհութիւն, բարեմտութիւն, հեզու-թիւն, առատասրտութիւն, համբերութիւն, ժուժկալութիւն, և ողջախոհութիւն։

Հրց. Զի՞նչ են պարգևքն Հոգւոյն սրբոյ։

Պ. Իմաստութիւն, հանճար, խորհուրդ. զօրու-թիւն, գիտութիւն, աստուածպաշտութիւն, և երկիւղ Աստուծոյ։

Հ. Օ՞րք են հոգեւոր ողորմութիւնքն:

Պ. Խրատել զմոլորեալս, առաջնորդել զտգի-տս, կշտամբել զմեղաւորս, մխիթարել զտրտմեալս, թողուլ զվնասս, յանձն առ-նուլ զվիշտս, և աղաչել զԱստուած վասն ամենեցուն և վասն իւր իսկ անձանց:

Հ. Օ՞րք են մարմնաւոր ողորմութիւնքն:

Պ. Կերակրել զքաղցեալս, արբուցանել զծա-րաւիս, զգեցուցանել զմերկս, ժողովել զօտարս, տեսանել զհիւանդս, այց առնել բանտարկելոց, և թաղել զմեռեալս:

Հ. Օ՞րք են աղօթքն:

Պ. Համբարձումն մտաց առ Աստուած:

Հ. Ո՞ր յաղօթից է հասարակագոյն ամենայն անձանց:

Պ. Աղօթք տէրունականն:

Հ. Աղօթքն տէրունականն ՚ի քանի՞ մասունս բաժանի:

Պ. ՚Ի կոչումն, յեօթն խնդրուածս և ՚ի վեր-ջաւորն:

Հ. Ո՞ր է կոչումն:

Պ. Հայր մեր՝ որ յերկինս ես:

Հ. Ո՞յք են խնդրուածքն:

Պ. ա, Սուրբ եղիցի անուն քո: բ, Եկեսցէ ար-քայութիւն քո: գ, Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի: դ, զՀաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: ե, Թո՛ղ մեզ

զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մե-
րոց պարտապանաց։ Զ, և մի՛ տանիր զմեզ
'ի փորձութիւն։ Է, այլ փրկեա՛ զմեզ 'ի
չարէ։

Հ. Ո՞ր է վերջաբանն։

Պ. Զի քո է արքայութիւն, և զօրութիւն և փառք յաւիտեանս։

Հ. Զի՞նչ են պտուղք։

Պ. Ժուժկալութիւն 'ի կերակրոց, և սանձահարութիւն լեզուի, կամաց և չար սովորութեանց։

Հ. Ո՞յք են գործք նման երանութեանց Քրիստոսի։

Պ. Հոգւով աղքատութիւն, սգաւորութիւն, հեզութիւն, սրբութիւն սրտի, ողորմածութիւն, խաղաղութիւն, քաղց և ծարաւ վասն արդարութեան, համբերութիւն 'ի հալածանս վասն ճշմարտութեան, և պատրաստութիւն լինել անարգեալ 'ի պատիւ և 'ի սէր Աստուծոյ։

Հ. Զի՞նչ են տասնաբանեայ պատուիրանքն։

Պ. Ա. Ես եմ Տէր Աստուած քո։ Բ. Մի՛ արասցես քեզ կուռս։ Գ. Յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթու։ Դ. Պատուեա՛ զհայր քո և զմայր։ Ե. Մի՛ սպանաներ։ Զ. Մի՛ շնար։ Է. Մի՛ գողանար։ Ը. Մի՛ սուտ վկայեր ըն-

կերէ քումմէ։ Ը. մի՛ երդնուցուս սուտ յա-
նուն Աստուծոյ քո։ Թ. մի՛ ցանկանար կնոջ
ընկերի քո և մի՛ ինչ օտարի։

Հ. Զ ի՞նչ իրքն ընդդիմանան այսոցիկ տասն Պատուիրանաց։

Պ. Մեղք կամ մոլութիւնք։

Հ. Քանի՞ են այսպիսի մեղաց։

Պ. Երկու. սկզբնական և ներգործական։

Հ. Զ ի՞նչ է սկզբնականն։

Պ. Սկզբնական են մեղք, զոր Ադամ եած յանձն և 'ի սերունդս իւր. որք մաքրին մկրտու-թեամբ. վասնորոյ և ասին ադամայն մեղք։

Հ. Զ ի՞նչ է այս ներգործականն։

Պ. Մեղք կամ յանցանք, յոր գործէ մարդ յետ մկրտութեան։

Հ. Ներգործականն 'ի քանի՞ բաժանին։

Պ. Յերկուս՝ 'ի մահացու և 'ի ներելի։

Հ. Զ ի՞նչ են մահացու մեղք։

Պ. Աստթար անօրէնութիւնք, որք մահացու-ցանեն զոգիս ընդունողելոյն 'ի նոյն։

Հ. Ներելիք ո՞յք են։

Պ. Յանցանք, զորս մոռանամք 'ի խոստովա-նութեան, և կամ ո՛չ կատարեմք զապաշ-խարութիւնն յոչ կամաց։

Հ. Մահացու մեղք ո՞յք են։

Պ. Մոլութիւնք՝ հպարտութիւն, նախանձ, բարկութիւն,

ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլու-
թիւն և բղջախոհութիւն:

Հ. Ո՞ր են մեղք ընդդէմ Հոգւոյն սրբոյ:

Պ. ա. Կամակոր հակառակութիւն ընդդէմ յայտնի ճշմարտութեան: բ. յանդգնութիւն: գ. յուսահատութիւն:

Հ. Ո՞ր են մեղք, որք զվրէժխնդրութիւն կոչեն 'ի յերկ-
նից վրէժխնդրեն:

Պ. Ինքնակամ սպանումն, անբնական տարփանք, զրկանք աղքատաց, և հատանել զվարձ մշակաց:

Հ. Քանի՞ եղանակք են մեղաց:

Պ. Երեք՝ խորհրդով, բանիւ և գործով:

Հ. Ո՞ւստի ծնանին մեղք:

Պ. Կրկին օրինակաւ՝ գիտութեամբ և անգիտութեամբ, կամայ և ակամայ:

## Ե. Վերջինք չորք:

Հ. Ո՞րք են, որք արգելեն զմարդ 'ի մեղաց, և քաջալերեն 'ի գործս բարիս:

Պ. Երկիւղ մահու, երկիւղ դատաստանի, երկիւղ դժոխոց, և ակնկալութիւն հատուցման:

Հ. Զի՞նչ ծնանի մահ:

Պ. Մեղքերք մարդոյ:

Հ. Զի՞նչ է մահն:

Պ. Բաժանումն հոգւոյ 'ի մարմնոյ:

Հ. Զի՞նչ է դատաստանն:

Պ. Քննութիւն յատենին Քրիստոսի:

Հ. Զի՞նչ է յարութիւնն:

Պ. Դարձ հոգւոյ յիւրաքանչիւր մարմինս:

Հ. Երբ լինելոց յարութիւն մեռելոց:

Պ. 'Ի վախճանի աշխարհի, 'ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի 'ի դատաստան:

Հ. Զի՞նչ է վախճան յարութեան և դատաստանի:

Պ. Հատուցումն իւրաքանչիւր մարդոյ ըստ գործոց:

Հ. 'Ի քանի՞ դաս բաժանին մարդիկ յետ յարութեան և դատաստանին:

Պ. Յերկուս՝ յարդարս և 'ի մեղաւորս:

Հ. Զի՞նչ հատուցանէ արդարոց:

Պ. Արքայք յաւիտենական:

Հ. Զի՞նչ հատուցանէ մեղաւորաց:

Պ. Տանջանք յաւիտենական:

Հ. Ուստի ուսանիմք զայս ամենայն:

Պ. 'Ի հանգանակէ հաւատոյ:

Հ. Զո՞րք են կէտք հանգանակին:

Պ. ա. Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն

ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի ե-
րևելեաց և աներևութից : Է․ Եւ ՚ի
մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աս-
տուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին,
այսինքն յէութենէ Հօր․ Աստուած յԱս-
տուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝
յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ ա-
րարած: Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր․ որով
ամենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ
երկրի, երևելիք և աներևոյթք: Որ յաղագս
մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան
իջեալ յերկնից, մարմնացաւ՝ մարդացաւ՝
ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ
կուսէն Հոգւովն սրբով : Որով էառ
զմարմին՝ զհոգի և զմիտս, և զամենայն՝ որ ինչ
է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք
Չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ : Յերրորդ
աւուր յարուցեալ : Ելեալ ՚ի յերկինս նո-
յին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց
է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դա-
տել զկենդանիս և զմեռեալս, որոյ թա-
գաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին յանեղ
և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և
՚ի մարգարէս և յաւետարանս․ որ էջն ՚ի

՚յորդանան, քարոզեաց զառաքեալսն, և բնա-կեցաւ 'ի սուրբսն:

գ. Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի. 'ի մի մկրտութիւն: դ. Յապաշխարութիւն՝ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց: ե. 'Ի յարութիւն մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց. յարքայութիւն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս:

Հ. Քանի՛ են ամփոփ հաւատոյ հիմն հաւատացելոց 'ի հանգամանս:

Պ. Հինգ: ա, Գոյութիւն և միութիւն Աստուծոյ, և Երրորդութիւն անձանց: բ. մարդեղութիւն Քրիստոսի և փրկական տնօրէնութիւնք նորա: գ. եկեղեցի և խորհուրդք նորա: դ. փրկութիւն մեր 'ի ձեռն գործոց բարեաց: ե. չորք վերջինք:

---

Նորակերտ տպարանս կազմեցաւ օգնութեամբ բարեպաշտից ոմանց, մանաւանդ ձեռնտուութեամբ Վերատեսչի Նախիջեւանայ Նահանգական Վարժարանի, Ազնուաբարոյ Աղայ Առաքելի Մահտեսի Գալստեան տէր Մկրտչեանց:

Ի սմին Գործարանի տպեցան արդեամբք Տէֆլիսոյ Պատուական Քաղաքացւոյ Աղայ Գաբրիէլի Թամամշեանց 1000 հատ օրինակաց Հայերէն, և ձրի բաշխեցան աղքատ մանկանց Հայոց. 1850. յամսեանն յունվարի:

Ծախիւք որդւոյ նորա՝ Աղայ Յովհաննիսի Թամամշեանց առաջին սան Հրահանգի Ներսիսեանական Հաստատոյ՝ ի լոյս ընծայեցաւ 1000 հատ, և ձրի բաշխեցաւ աղքատ մանկանց Հայոց՝ [illegible] [illegible]. յամսեանն մարտի. 1850:

Ծախիւք վերոյիշեալ Բարեպաշտի Աղայ Աւետիքի Տէր Մկրտչեանց տպեցաւ 1000 հատ Այբբենարան Ռուսերէն. 1850. յամսեանն մայիսի:

Տպեցաւ Օրացոյց 1851 ամի.

Այս երկրորդ անգամ Հրահանգի Ներս. Հաստատոյ՝ ի լոյս ընծայեցաւ արդեամբք նոյն Աղայ Աւետիքի Տէր Մկրտչեանց. ի 1850 յամսեանն Օգոստոսի: